Պարույր Սևակ

Անօգուտ փնտրտուք կամ երջանիկ գյուտ

Ա՛խ, իզուր է,
Շա՛տ իզուր է որոնումը այն ամենի,
Ինչ իր անցած ուղիներում
Կորցրել է մարդկությունը,
Որի բոլո՛ր գրպանները
Վաղո՛ւց մաշված-ծակծկված են:
Ու բարի է հողը՝ պառավ մամիկի՛ պես.
Ինչ որ կորավ՝
Անմիջապես նա պահում է ու թաքցնում
Իր փեշի տակ մամիկային
(Ծածկաբերան մի խոռոչում,
Փոշու ներքո,
Սառույցի մեջ հավերժական,
Մինչև անգամ ածխի շերտում)...
Իսկ անփույթ են ճամփաները՝
Պատանո՛ւ պես
(Ինչ որ կորավ՝
Շուտ կորչում է կորցրնողի ի՛ր իսկ ոտքի,
Մեքենայի անիվ-ակի.
Ձիու-ջորու սմբակի տակ,
Նույնիսկ ամպի սևանկար-պատճենի մեջ՝

Ա՛յն ստվերում,
Որ հինավուրց հափշտակիչ-ավազակ է)...
Եվ իզուր է,
Չէ՛, իզուր է որոնումը ա՛յն ամենի,
Ինչ դարավոր իր ճամփեքին կորցրել է
Մարդկությունը,
Որի բոլո՛ր գրպանները
Վաղո՛ւց մաշված-ծակծկված են...
Ու երջանիկ է իսկապես,
Բախտավոր է նա՛ միմիայն,
Որ դարավոր ճամփաների
Ինչ-որ մի նեղ խաչմերուկում՝
Ամենևի՛ն չփնտրելով,
Այլ ակամա-հանկարծակի
Հեգ մարդկության կորուստներից մեկն է գտնում՝
Արեգակի
Կամ իր աչքի մատնիչ շողի միջնորդությամբ:
Գտնում, սակայն չի թաքցընում,
Այլ տալիս է իր տիրոջը՝
Մարդկությա՛նը,
Վերադարձնում նրա կորած գեղեցկության
Կամ բարության,
Ազնվության և կամ սիրո
Մի նշխարը,
Մի մասունքը:
Միայն այսպես է գտնվում
Հեգ մարդկության կորուստներից ինչ-որ մեկը,
Թե չէ իզո՛ւր, շա՛տ իզուր է
Ակնկալված և ակնկոր որոնումը ա՛յն ամենի,
Ինչ իր անցած ճամփաներին կորցրել է

Մարդկությունը,
Որի բոլո՛ր գրպանները
Վաղո՛ւց մաշված-ծակծկված են...

04.XII.1964թ.
Երևան